Համաշխարհային տնտեսական համաժողովի

«Համաշխարհային առևտրի խթանման 2012 թ. զեկույցը»

Համաշխարհային տնտեսական համաժողովը մայիսի 24-ին հրապարակել է **«Համաշխարհային առևտրի խթանման 2012»** զեկույցը (**Global Enabling Trade Report-2012**)[1], որում ներկայացվում է համաշխարհային առևտրի խթանման համեմատական վերլուծությունը աշխարհի 125 երկրների, այդ թվում նաև Հայաստանի համար: Զեկույցի նպատակն է վերլուծել առեւտրի խթանմանն ուղղված քաղաքականությունները եւ դրանց արդյունավետությունը տարբեր երկրներում:

Նշված ինդեքսը գնահատում է երկրների սահմաններով ապրանքների ազատ հոսքերի հեշտացմանը նպաստող գործոնների, քաղաքականությունների և ծառայությունների առկայությունը երկրներում: Ինդեքսը հաշվարկելիս դիտարկվում են 4 ոլորտներ՝ իրենց բաղկացուցիչ 9 հենասյուներով (47 ենթագործոններով)՝

I. **Շուկայի մուտքը**
   - տեղական և օտարերկրյա շուկաների մատչելիությունը

II. **Մաքսային վարչարարությունը**
   - մաքսային վարչարարության արդյունավետությունը
   - ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետությունը
   - մաքսային վարչարարության թափանցիկությունը

III. **Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքը**
   - տրանսպորտի ենթակառուցվածքի մատչելիությունն ու որակը
   - տրանսպորտային ծառայությունների մատչելիությունն ու որակը
   - տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունն ու օգտագործումը

IV. **Գործարար միջավայրը**
   - կանոնակարգումների միջավայրը
   - ֆիզիկական անվտանգությունը:

Նշված 4 ոլորտների բաղկացուցիչ մասերը կազմող 9 հենասյուներից յուրաքանչյուրի գծով հաշվարկվել են ենթաինդեքսներ՝ 7 բալային համակարգով, որում «7» գնահատականը համապատասխանում է միջազգային առևտրում ամենից ազատ, իսկ «1» գնահատականը՝ ամենից սահմանափակ երկրի վիճակին: Հենասյուների գնահատականների պարզ միջին թվաբանականի կիրառմամբ ստացվել են 4 ոլորտներից յուրաքանչյուրի ինդեքսը (ենթաինդեքսը), իսկ վերջիններիս միջինի հիման վրա՝ համընդհանուր՝ «Համաշխարհային առևտրի խթանման» ինդեքսը:

---

[1] ***Տե՛ս*** *The Global Enabling Trade Report 2012//World Economic Forum 2012: <:http://www3.weforum.org/docs/GETR/2012/GlobalEnablingTrade_Report.pdf>:*

Նկատենք, որ «Համաշխարհային առևտրի խթանման 2012 թ. զեկույցը» Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակում է չորրորդ անգամ: 2008թ.-ի զեկույցում ընդգրկվել էին 118 երկրներ, 2009թ.-ի զեկույցում՝ 121 երկրներ, իսկ 2010թ.-ի զեկույցում՝ 125, իսկ 2012 թ.-ին ավելացել են 7 երկիր (Անգոլա, Հայիթի, Իրան, Լիբանան, Մոլդովա, Ռուանդա, Եմեն), այսինքն՝ 2012 թ. զեկույցում ընդգրկվել են 132 երկրներ: Նշենք, որ համաշխարհային առևտրի բացվածության և ներդրումների ներգրավման առաջին տասնյակում են Սինգապուրը, Հոնկոնգ, Դանիան, Շվեդիան, Նոր Զելանդիան, Ֆինլանդիան, Նիդերլանդները, Շվեյցարիան, Կանադան և Լյուքսեմբուրգը, իսկ վերջին տասնյակում են՝ Նիգերիան, Նեպալը, Մավրիտանիան, Կոտ դ'Իվուարը, Անգոլան, Հայիթին, Զիմբաբվեն, Վենեսուելան, Բուրունդին և Չադը:

Համաշխարհային առևտրի խթանման 2012թ. ինդեքսի գնահատման հիմքում ընկած են 2010-2011 թթ. տվյալները:

<u>Հայաստանի գնահատականները.</u> Համաշխարհային առևտրի խթանման Հայաստանի 2012թ. ինդեքսի գնահատականը 2010թ.-ի համեմատ չի փոխվել՝ կազմել է 4.2 միավոր, սակայն Հայաստանի դիրքը վատացել է 7 մակարդակով: Եթե 2010թ.-ին Հայաստանը աշխարհի 125 երկրների թվում գրավում էր 52-րդ տեղը, ապա 2012թ.-ին աշխարհի 132 երկրների թվում գրավել է 59-րդ տեղը: Դա պայմանավորված է, նախ, այն հանգամանքով, որ 2010թ.-ի վարկանշային աղյուսակում Հայաստանին զիջող 6 երկրներ (Ինդոնեզիա, Պերու, Թաիլանդ, Ալբանիա, Լեհաստան, Բոթսվանա) զգալի առաջընթաց են գրանցել միջազգային առևտրի խթանման բնագավառում և վարկանշային աղյուսակում առաջ են անցել Հայաստանից: Բացի այդ, 2012թ. զեկույցում ավելացած նոր երկրներից Ռուանդան իր ինդեքսի գնահատման արդյունքում գրավել է ավելի բարձր դիրք, քան Հայաստանը:

Ինչ վերաբերում է Համաշխարհային առևտրի խթանման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած 4 ոլորտների գնահատականներին, պետք է նշել, որ 4 մակարդակով բարելավվել է այդ ոլորտներից **գործարար միջավայրի** գնահատականը, սակայն վատացել են **շուկայի մուտքը** (4 մակարդակով)**, մաքսային վարչարարության** (1 մակարդակով) և **տրանսպորտի ու հեռահաղորդակցության ենթակառուցվածքի** (3 մակարդակով) գնահատականները (աղ. 1-2):

Գործարար միջավայրի գնահատականը, որն անդրադառնում է վարչարարության որակին, ֆիզիկական ապահովության և ոլորտը կարգավորող դաշտի ազդեցությունը արտահանողների և ներմուծողների վրա, բարելավվել է ի շնորհիվ դրա հաշվարկման հիմքում ընկած «Բարոյականություն և կոռուպցիա», «Դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցություններ», «Կառավարության արդյունավետություն», «Ֆինանսական շուկայի արդյունավետություն» և «Բացվածությունը բազմակողմանի առևտրի կանոններին» հենասյուների բարելավման: Նկատենք, որ այս դրական զարգացումների հետ միասին 2010-2011թթ. արդյունքներով Հայաստանում վատացել է «Մասնավոր սեփականության պաշտպանվածություն» հենասյան գնահատականը (աղ. 2):

Շուկայի մուտքի գնահատականը**,** որը նկարագրում է, թե որքանով է երկրի արտաքին առևտրի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը խրախուսում օտարերկրյա ապրանքատեսակների շրջանառությունը ներքին շուկայում և նպաստում արտասահմանյան շուկաներում տեղի արտադրողների ազատ մուտքին, վատացել է՝ պայմանավորված է հիմնականում «Նպատակային շուկաներում ՀՀ արտահանման/ներմուծման նկատմամբ այլ երկրների կողմից կիրառվող նպաստավոր խտրական մաքսային դրույքներ» և «Կիրառվող միջին մաքսային դրույք» հենասյուների գնահատականների վատացմամբ, որը մասամբ մեղմվել է 2010-2011թթ. Հայաստանի մաքսային դրույքների ցրվածքի (ստանդարտ շեղման) կրճատմամբ և մաքսատուրքով չհարկվող ներմուծումների տեսակարար կշռի ավելացմամբ: Այս ոլորտում հարկ ենք համարում հատկապես ներկայացնել **«Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքներ»** ցուցանիշի գնահատման մեթոդաբանությունը, քանի որ այս ցուցանիշի գծով Հայաստանը ինչպես և նախորդ զեկույցում գրավում է **ամենավերջին** (2012թ. զեկույցում՝ 132-րդ) տեղը դիտարկված երկրների թվում: «Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքներ» ցուցանիշը Հայաստանի համար ստանալու նպատակով, նախ, հաշվարկվել է «0» կամ «10» տոկոս մաքսային դրույքաչափեր ունեցող ներմուծվող և արտահանվող բոլոր ապրանքատեսակների գծով 2011թ.-ի միջին մաքսադրույքը (ստացվել է 1.88%): Այնուհետև, ըստ մեթոդաբանության, վերցրել են միջին դրույքաչափի 3-ապատիկը՝ 5.64% և հաշվել այն բոլոր ապրանքատեսակների թիվը, որոնց դրույքաչափերը գերազանցում են 5.64%-ը (Հայաստանի դեպքում նման, այսինքն՝ 10% դրույքաչափեր ունեցող ապրանքատեսակների թիվը կազմել է 98): Հաջորդ քայլում, հաշվարկել են 5.64%-ը գերազանցող ապրանքատեսակների տեսակարար կշիռը ներմուծվող և արտահանվող ապրանքատեսակների ընդհանուր թվում: Նկատենք, որ որքան մեծ է այդ տեսակարար կշիռը (Հայաստանի դեպքում ստացվել է 27%), այնքան ցածր է երկրի գնահատականը (ինդեքսը) և տեղը այս ցուցանիշի գծով (աղ. 2):

Մաքսային վարչարարության ոլորտի գնահատականը, որը ներկայացնում է թե որքանով են այս ոլորտում կիրարկվող մեխանիզմները նպաստում ապրանքների արդյունավետ հոսքին, վատացել է՝ հիմնականում պայմանավորված ներմուծման և արտահանման ծախքերի ավելացմամբ, ինչպես նաև կոռուպցիայի ընկալման ինդեքսի վատացմամբ: Նկատենք, որ չնայած ոլորտի ընդհանուր գնահատականը վատացել է, սակայն 2010-2011 թթ. արդյունքներով այս ոլորտում իրականացվել են որոշակի բարեփոխումներ, որոնք հանգեցրել են առանձին հենասյուների գնահատականների բարելավմանը: Մասնավորապես, ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի գնահատականների, Հայաստանում թեթևացել է մաքսային կարգավորումների բեռը, բարձրացել է մաքսազերծման գործընթացների արդյունավետությունը, նվազել է արտահանման/ներմուծման վրա ծախսվող օրերի թիվը, պակասել են արտահանման և ներմուծման համար կատարվող անօրինական վճարումները (աղ. 2):

Տրանսպորտի ու հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ոլորտի գնահատականը, որը ցույց է տալիս, թե որքանով է վերջինս ապահովում

բեռնափոխադրումների ոլորտի արդյունավետ գործունեությունը երկրի ներսում և դրանից դուրս, վատացել է՝ պայմանավորված ճանապարհների որակի և բեռնափոխադրումների ոլորտի մրցունակության վատացմամբ, տրանսպորտի ոլորտում Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (GATS) շրջանակում երկրի ստանձնած պարտավորությունների իրականացման թերացմամբ, միջազգային բեռնափոխադրումների իրականացման ուշացումներով: Այս ամենին զուգահեռ, 2010-2011թթ. ընթացքում ինչպես **տրանսպորտի, այնպես էլ տեղեկատվական** և **հեռահաղորդակցության** ոլորտում արձանագրվել են զգալի բարեփոխումներ: Մասնավորապես, **տրանսպորտի** ոլորտում ավելացել է սալարկված ճանապարհների թիվը, բարելավվել է երկաթուղային ենթակառուցվածքի որակը, մեծացել է միջազգային բեռնափոխադրումների կազմակերպման դյուրինությունն ու մատչելիությունը, հեշտացել է այդ բեռնափոխադրումների ուղուն հետևելը, բարձրացել է փոստային ծառայությունների արդյունավետությունը: **Տեղեկատվական** և **հեռահաղորդակցության** ոլորտում աճել է ինտերնետից օգտվողների տեսակարար կշիռը, բիզնեսի կողմից ինտերնետի օգտագործումը, բջջային հեռախոսների և լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թիվը, ներդրվել են կառավարության առցանց ծառայություններ (աղ. 2):

Միջազգային առևտրի խթանման ոլորտում Հայաստանի 2012 թ., 2010թ., 2009թ. և 2008թ. ինդեքսների բաղկացուցիչ մաս կազմող 4 ոլորտների ենթաինդեքսների և 9 առանձին հենասյուների գնահատականների համեմատությունը, միջազգային առևտրի բնագավառում Հայաստանի զարգացումները, համեմատական առավելություններն ու թույլ կողմերը ներկայացվում են աղյուսակներ 1-3:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում.</u> Հարավ-կովկասյան տարածաշրջանի առումով նշենք, որ Վրաստանը և Ադրբեջանը նույնպես հետընթաց են արձանագրել Համաժողովի «Համաշխարհային առևտրի խթանման» 2012 թ. ինդեքսով; Մասնավորապես, աշխարհի 132 երկրների թվում Վրաստանը գրավում է 38-րդ տեղը՝ նախորդ զեկույցում նշված 37-րդ տեղի փոխարեն, իսկ Ադրբեջանը գրավում է 81-րդ տեղը՝ նախորդ զեկույցում նշված 77-րդ տեղի փոխարեն: Նկատենք, որ եթե «Համաշխարհային առևտրի խթանման» 2010 թ. ինդեքսով Հայաստանը Վրաստանին զիջում էր համաշխարհային առևտրի խթանման բաղկացուցիչ մաս կազմող բոլոր 4 ոլորտների գնահատականներով, ապա 2012 թ. ինդեքսով Հայաստանը գերազանցում է Վրաստանին տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտի գնահատականով: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նկատենք, որ Հայաստանը Ադրբեջանին գերազանցում է շուկայի մուտքի, մաքսային վարչարարության, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտների գնահատականներով, սակայն զիջում է գործարար միջավայրի կարգավորման ոլորտի գնահատականով: Այսպիսով, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտի գնահատականով Հայաստանը հարավ-կովկասյան տարածաշրջանում գերազանցում է, իսկ գործարար միջավայրի կարգավորման ոլորտի գնահատականով զիջում է իր երկու հարևաններին:

Համաշխարհային առևտրի խթանման 2012 թ. գնահատականներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է մերձբալթյան երկրներին և Վրաստանին, իսկ

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանը գերազանցում է Մակեդոնիային, Ռումինիային, Սերբիային, Բուլղարիային և Բոսնիա-Հերցոգովինային: Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինդեքսները՝ իրենց համապատասխան գնահատականներով և դրանց հաշվարկման ընթացքում առանձնացված ոլորտների ենթաինդեքսներով ներկայացվում են աղյուսակներ 4-8-ում:

Հայաստանի «Համաշխարհային առևտրի խթանման» գնահատականներն ըստ ոլորտների՝

գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից

Աղյուսակ 1.

	Ինդեքսի անվանումը	**2012թ. դիրքը (132 երկրների թվում)**	**2010թ. դիրքը (125 երկրների թվում)**	**2009թ. դիրքը (121 երկրների թվում)**	**2008թ. դիրքը (118 երկրների թվում)**
	Համաշխարհային առևտրի խթանման ինդեքս	***59***	***52***	***64***	***61***
1.	Շուկայի մուտքը	**13**	**9**	**42**	**43**
2.	Մաքսային վարչարարություն	**85**	**84**	**87**	**87**
3.	Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածք	**63**	**60**	**61**	**77**
4.	Գործարար միջավայր	**61**	**65**	**64**	**53**

Հայաստանի «Համաշխարհային առևտրի խթանման» գնահատականները ըստ 9 հենասյուների՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2012թ. գնահատականների

Աղյուսակ 2.

	ԵՆԹԱԻՆԴԵՔՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2012թ. դիրքը 132 երկրների թվում/ գնահատական	2010թ. դիրքը 125 երկրների թվում/ գնահատական	2009թ. դիրքը 121 երկրների թվում / գնահատականը	2008թ. դիրքը 118 երկրների թվում/ գնահատականը
1.	**ՏԵՂԱԿԱՆ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**13/4.9**	**9/5.3**	**42/4.2**	**43/4.7**
1.01	Մաքսային խոչընդոտներ (առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքաչափ), %	34/2.2	33/2.2	109/13.6	36/3.3
	Մաքսային խոչընդոտներ ոչ գյուղատնտեսական արտադրանքի գծով, %	--	--	37/2.1	--
	Մաքսային խոչընդոտներ գյուղատնտեսական արտադրանքի գծով, %	--	--	121/83.4	--
1.02	Ոչ մաքսային խոչընդոտների ինդեքս 0-100 (վատագույնը)	n/a	n/a	n/a	n/a
1.03	Մաքսային դրույքների բարդության ինդեքս 1-7 (լավագույնը)	77/5.1	72/5.1	69/5.4	--
	Մաքսային դրույքների ցրվածքը (ստանդարտ շեղումը)	36/7.2	73/9.2	119/59.4	--
	Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքները, %	132/27.0	125/27.0	33/0.4	--
	Հատուկ մաքսային դրույքներ, %	68/0.5	64/0.5	54/0.5	--
	Ներմուծման նկատմամբ կիրառվող առանձնահատուկ (distinct) մաքսային դրույքների քանակը	63/32	58/32	57/32	--
1.04	Մաքսազերծ (duty-free) ներմուծումների տես. կշիռը, %	27/75.5	28/72.5	21/74	36/79
1.05	Կիրառվող միջին մաքսային դրույքը, %	63/5.6	45/5.4	88/5.6	--
1.06	Նպատակային շուկաներում նպաստավոր խտրական դրույքների ինդեքս 0-100 (լավագույնը)	20/53.7	5/81.6	10/70.3	--
2.	**ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱ-ՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**74/4.0**	**76/3.9**	**64/3.5**	**103/2.6**
2.01	Մաքսային կարգավորումների բեռը 1- 7 (լավագույնը)	122/2.9	123/2.7	111/2.7	110/2.6
2.02	Մաքսային ծառայությունների ինդեքս 0-12 (լավագույնը)	39/8.5	39/8.5	38/7.5	80/3.8
3.	**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ/ՆԵՐՄՈՒԾՄԱՆ**	**96/4.0**	**89/4.1**	**99/3.6**	**74/4.2**

	ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ				
3.01	Մաքսազերծման գործընթացների արդյունավետությունը 1-5 (լավագույնը)	107/2.3	109/2.1	101/2.1	98/2.1
3.02	Ներմուծման վրա ծախսվող օրերի թիվը	66/18	64/20	74/24	69/2.4
3.03	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	74/8	50/7	85/9	59/8
3.04	Ներմուծման ծախքը (ԱՄՆ դոլար), մեկ բեռնարկղի հաշվով	111/2195	107/2096	101/1981	81/1335
3.05	Արտահանման վրա ծախսվող օրերի թիվը	43/13	55/17	95/30	--
3.06	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	29/5	28/5	67/7	--
3.07	Արտահանման ծախքը (ԱՄՆ դոլար), մեկ բեռնարկղի հաշվով	109/1815	104/1731	100/1746	--
4.	**ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻ-ԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**100/2.7**	**109/2.6**	**106/2.7**	**92/3.1**
4.01	Արտահանման և ներմուծման համար կատարվող անօրինական վճարումները 1- 7 (լավագույնը)	100/2.8	116/2.6	115/2.6	95/3.3
4.02	Կոռուպցիայի ընկալման ինդեքս 0- 10 (լավագույնը)	104/2.6	92/2.7	84/2.9	74/3.0
5.	**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**59/4.4**	**55/4.4**	**69/3.6**	**65/3.7**
5.01	Օդանավակայանի խտությունը, թվաքանակ 1 մլն բնակչության հաշվով	60/0.6	59/0.7	60/0.7	56/0.7
5.02	Ուղեփոխադրումների կապվածության ինդեքս 0-100 (լավագույնը)	n/a	n/a	n/a	n/a
5.03	Սալարկված ճանապարհներ, ընդհանուրի մեջ %	28/90.5	30/89.0	27/90.0	1/100.0
5.04	Օդային տրանսպորտի ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	69/4.5	69/4.5	78/4.2	80/3.9
5.05	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	70/2.5	86/1.9	79/1.8	76/1.9
5.06	Ճանապարհների որակը 1- 7 (լավագույնը)	85/3.3	68/3.6	71/3.2	68/3.1
5.07	Նավահանգստային ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	123/2.7	110/2.9	103/2.7	94/2.8
6.	**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**62/3.8**	**36/4.3**	**50/3.8**	**89/3.1**
6.01	Մարդատար (լայներային) փոխադրումների կապվածության	n/a	n/a	n/a	n/a

	ինդեքս 0- 132.5 (լավագույնը)				
6.02	Միջազգային բեռնափոխադրումների կազմակերպման դյուրինությունը և մատչելիությունը 1- 5 (լավագույնը)	95/2.7	111/2.4	115/2.0	113/2.0
6.03	Բեռնափոխադրումների ոլորտի մրցունակությունը 1- 5 (լավագույնը)	105/2.4	69/2.6	104/2.1	102/2.1
6.04	Միջազգային բեռնափոխադրումների ուղուն հետևելը (tracking) 1- 5 (լավագույնը)	96/2.6	115/2.3	102/2.2	100/2.2
6.05	Միջազգային բեռնափոխադրումների ժամանակին հասնելը նշանակված կետը 1- 5 (լավագույնը)	92/3.1	71/3.4	106/2.6	105/2.6
6.06	Փոստային ծառայությունների արդյունավետությունը 1- 7 (լավագույնը)	69/4.6	72/4.5	63/4.6	63/4.1
6.07	Ծառայությունների առևտրի հիմնական համաձայնագրի (GATS) դրույթների կիրառումը տրանսպորտի հատվածում 0- 1 (լավագույնը)	14/0.5	1/0.6	2/59.9	--
7.	**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**67/3.6**	**85/2.7**	**70/2.9**	**86/2.2**
7.01	Բիզնեսի կողմից ինտերնետի օգտագործում 1- 7 (լավագույնը), 2010-2011թթ.	105/4.3	102/3.8	99/4.1	75/4.4
7.02	Բջջային կապի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2010-2011թթ.	30/125.0	51/100.0	71/62.5	106/10.5
7.03	Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2011թ.	78/2.8	96/0.2	n/a	90/0.1
7.04	Կառավարության առցանց ծառայությունների ինդեքս 0- 1 (լավագույնը), 2012թ.	102/0.3	101/0.2	--	--
7.05	Ինտերնետից օգտվողների տես.կշիռը, %, 2012թ.	54/44.0	102/6.2	97/5.7	91/5.7
8.	**ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**85/3.6**	**96/3.4**	**91/3.5**	**47/4.6**
8.01	Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը 1- 7 (լավագույնը)	86/3.5	80/3.7	70/4.0	--
8.02	Բարոյականություն և կոռուպցիա 1- 7 (լավագույնը)	84/2.9	94/2.5	99/2.4	--
8.03	Դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցություններ 1- 7 (լավագույնը)	92/2.8	110/2.6	104/2.5	--
8.04	Կառավարության արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	57/3.7	79/3.3	81/3.2	--

8.05	Տեղական մրցակցություն 1- 7 (լավագույնը)	110/3.8	106/3.8	104/3.8	--
8.06	Ֆինանսական շուկայի արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	100/3.0	101/3.1	--	--
8.07	Բացվածությունը օտարերկրյա կապիտալի մասնակցությանը 1- 7 (լավագույնը)	43/4.8	55/4.8	48/5.2	--
	Օտարերկրյա աշխատուժ վարձելու դյուրինությունը 1- 7 (լավագույնը)	5/5.4	6/5.5	7/5.8	2/5.9
	Օտարերկրյա սեփականության համընդհանուր ընդունումը 1- 7 (լավագույնը)	97/4.3	91/4.4	77/4.9	69/5.0
	Օտարերկրյա ներդրումների օրենսդրության բիզնես ազդեցությունը 1- 7 (լավագույնը)	88/4.2	84/4.6	79/4.8	69/5.0
	Բացվածությունը բազմակողմանի առևտրի կանոններին, ինդեքս 0- 100 (լավագույնը)	38/74.4	58/62.9	--	--
	Կապիտալի նկատմամբ վերահսկողությունը 1- 7 (լավագույնը)	--	54/4.7	53/5.0	--
9.	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱ-ԻՆԴԵՔՍ**	**49/5.2**	**46/5.2**	**46/5.2**	**61/4.6**
9.01	Ոստիկանական ծառայությունների հուսալիությունը 1- 7 (լավագույնը)	97/3.5	97/3.4	84/3.6	82/3.6
9.02	Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը 1- 7 (լավագույնը)	23/5.7	20/5.8	28/5.7	32/5.4
9.03	Ահաբեկչության ազդեցությունը գործարար ծախքերի վրա 1- 7 (լավագույնը)	16/6.4	23/6.4	28/6.2	33/5.8

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը առևտրի խթանման ոլորտում ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2012թ. գնահատականների (դիրքը աշխարհի 132 երկրների թվում)

Աղյուսակ 3.

Առավելությունները	Դիրքը	Թույլ կողմերը	Դիրքը
ՏԵՂԱԿԱՆ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ – 13			
Նպատակային շուկաներում նպաստավոր խտրական մաքսային դրույքների ինդեքս 0-100 (լավագույնը)	20	Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքները, %	132
Մաքսազերծ (duty-free) ներմուծումների տես. կշիռը, %	27	Մաքսային դրույքների բարդության ինդեքս 1-7 (լավագույնը)	77
Մաքսային խոչընդոտներ (առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույք), %	34	Հատուկ մաքսային դրույքներ, %	68
Մաքսային դրույքների ցրվածքը (ստանդարտ շեղումը)	36	Ներմուծման նկատմամբ կիրառվող առանձնահատուկ (distinct) մաքսային դրույքների քանակը	63
		Կիրառվող միջին մաքսային դրույքը, %	63
ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ-74			
Մաքսային ծառայությունների ինդեքս 0-12 (լավագույնը)	39	Մաքսային կարգավորումների բեռը 1- 7 (լավագույնը)	122
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ/ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ - 96			
Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	29	Ներմուծման ծախքը (ԱՄՆ դոլար), մեկ բեռնարկղի հաշվով	111
Արտահանման վրա ծախսվող օրերի թիվը	43	Մաքսազերծման արդյունավետությունը 1-5 (լավագույնը)	107
		Արտահանման ծախքը (ԱՄՆ դոլար), մեկ բեռնարկղի հաշվով	109
		Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	74
		Ներմուծման վրա ծախսվող օրերի թիվը	66
ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ-100			
		Կոռուպցիայի ընկալման ինդեքս 0- 10 (լավագույնը)	104
		Արտահանման և ներմուծման համար կատարվող անօրինական վճարումները 1- 7 (լավագույնը)	100
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ -59			
Սալարկված ճանապարհներ, ընդհանուրի մեջ %	28	Նավահանգստային ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	123
		Ճանապարհների որակը 1- 7 (լավագույնը)	85

		Երկաթուղային ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	70
		Օդային տրանսպորտի ենթակառուցվածքի որակը 1- 7 (լավագույնը)	69
		Օդանավակայանի խտությունը, թվաքանակ 1 մլն բնակչության հաշվով	60
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ-62			
Ծառայությունների առևտրի հիմնական համաձայնագրի (GATS) դրույթների կիրառումը տրանսպորտի հատվածում 0- 1 (լավագույնը)	14	Բեռնափոխադրումների ոլորտի մրցունակությունը 1- 5 (լավագույնը)	105
		Միջազգային բեռնափոխադրումների ուղուն հետևելը (tracking) 1- 5 (լավագույնը)	96
		Միջազգային բեռնափոխադրումների կազմակերպման դյուրինությունը և մատչելիությունը 1- 5 (լավագույնը)	95
		Միջազգային բեռնափոխադրումների ժամանակին հասնելը նշանակված կետը 1- 5 (լավագույնը)	92
		Փոստային ծառայությունների արդյունավետությունը 1- 7 (լավագույնը)	69
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ - 67			
Բջջային կապի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2010-2011թթ.	30	Բիզնեսի կողմից ինտերնետի օգտագործում 1- 7 (լավագույնը), 2010-2011թթ.	105
		Կառավարության առցանց ծառայությունների ինդեքս 0- 1 (լավագույնը), 2012թ.	102
		Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2011թ.	78
		Ինտերնետից օգտվողների տես.կշիռը, %, 2012թ.	54
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ -85			
Օտարերկրյա աշխատուժ վարձելու դյուրինությունը 1- 7 (լավագույնը)	5	Տեղական մրցակցություն 1- 7 (լավագույնը)	110
Բացվածությունը բազմակողմանի առևտրի կանոններին, ինդեքս 0- 100 (լավագույնը)	38	Ֆինանսական շուկայի արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	100
Բացվածությունը օտարերկրյա կապիտալի մասնակցությանը 1- 7 (լավագույնը)	43	Օտարերկրյա սեփականության համընդհանուր ընդունումը 1- 7 (լավագույնը)	97
		Դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցություններ 1- 7 (լավագույնը)	92

		Օտարերկրյա ներդրումների օրենսդրության բիզնես ազդեցությունը 1- 7 (լավագույնը)	88
		Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը 1- 7 (լավագույնը)	86
		Բարոյականություն և կոռուպցիա 1- 7 (լավագույնը)	84
		Կառավարության արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	57
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ - 49			
Ահաբեկչության ազդեցությունը գործարար ծախքերի վրա 1- 7 (լավագույնը)	16	Ոստիկանական ծառայությունների հուսալիությունը 1- 7 (լավագույնը)	97
Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը 1- 7 (լավագույնը)	23		

«Համաշխարհային առևտրի խթանում» ինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2012թ. (աշխարհի 132 երկրների շարքում)

Աղյուսակ 4.

Ե ր կ ր ն ե ր	**Առևտրի խթանման ինդեքս**		այդ թվում							
			Շուկայի մուտքը		**Մաքսային վարչարարություն**		**Տրանսպորտ և հեռահաղորդակցություն**		**Գործարար միջավայր**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	26	4.85	67	3.90	16	5.61	31	4.72	27	5.18
Սլովենիա	33	4.65	67	3.90	29	5.10	30	4.85	39	4.73
Վրաստան	38	4.58	9	5.10	33	4.85	66	3.88	50	4.49
Մոնտենեգրո	39	4.46	38	4.41	52	4.36	54	4.06	32	5.02
Չեխիա	41	4.42	67	3.90	41	4.65	32	4.71	54	4.43
Լիտվա	45	4.39	67	3.90	40	4.67	38	4.54	51	4.45
Խորվաթիա	46	4.39	42	4.37	61	4.11	33	4.71	60	4.36
Հունգարիա	47	4.39	67	3.90	35	4.82	42	4.37	53	4.45
Լեհաստան	48	4.37	67	3.90	38	4.73	49	4.24	46	4.61
Ալբանիա	49	4.36	15	4.87	54	4.32	71	3.81	52	4.45
Լատվիա	52	4.31	67	3.90	43	4.59	44	4.35	58	4.41
Սլովակիա	55	4.29	67	3.90	49	4.38	37	4.55	63	4.32
Հայաստան	59	4.19	13	4.94	85	3.54	63	3.92	61	4.36
Մակեդոնիա	61	4.13	20	4.81	80	3.77	76	3.73	73	4.21
Ռումինիա	69	4.02	67	3.90	57	4.24	68	3.86	81	4.09
Սերբիա	71	3.97	46	4.32	67	3.98	75	3.73	91	3.85
Բուլղարիա	74	3.93	67	3.90	74	3.88	52	4.20	98	3.74
Մոլդովա	76	3.92	19	4.83	101	3.32	83	3.59	87	3.93
Բոսնիա-Հերցոգ.	80	3.87	48	4.26	97	3.41	80	3.69	78	4.11
Ադրբեջան	81	3.85	57	4.07	107	3.11	69	3.84	59	4.37
Ուկրաինա	86	3.79	26	4.73	116	2.85	64	3.91	103	3.86
Ղազախստան	105	3.50	120	3.19	127	2.62	45	4.31	89	3.90
Տաջիկստան	110	3.45	100	3.72	128	2.48	92	3.40	72	4.22
Ղրղզստան	111	3.45	39	4.39	125	2.64	98	3.31	116	3.45
Ռուսաստան	112	341	129	2.94	111	3.03	51	4.23	113	3.45

Շուկայի մատչելիության ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2012թ. (աշխարհի 132 երկրների շարքում)

Աղյուսակ 5.

. Ե ր կ ր ն ե ր	**Շուկայի մուտքը ենթաինդեքս**		այդ թվում			
			Տեղական շուկայի մուտքը		**Օտարերկրյա շուկաների մուտքը**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Վրաստան	9	5.10	7	5.93	46	3.42
Հայաստան	**13**	**4.94**	**15**	**5.61**	**38**	**3.60**
Ալբանիա	15	4.87	12	5.73	54	3.15
Մոլդովա	19	4.83	26	5.22	20	4.04
Մակեդոնիա	20	4.81	16	5.57	50	3.30
Ուկրաինա	26	4.72	18	5.47	51	3.24
Մոնտենեգրո	38	4.41	27	5.20	66	2.84
Ղրղզստան	39	4.39	81	4.70	32	3.77
Խորվաթիա	42	4.37	28	5.19	72	2.73
Սերբիա	46	4.32	34	5.10	71	2.75
Բոսնիա-Հերցոգ.	48	4.26	38	5.01	70	2.77
Ադրբեջան	57	4.07	90	4.52	53	3.16
Հունգարիա	67	3.90	50	4.83	94	2.06
Լիտվա	67	3.90	50	4.83	94	2.06
Բուլղարիա	67	3.90	50	4.83	94	2.06
Լատվիա	67	3.90	50	4.83	94	2.06
Ռումինիա	67	3.90	50	4.83	94	2.06
Էստոնիա	67	3.90	50	4.83	94	2.06
Սլովենիա	67	3.90	50	4.83	94	2.06
Լեհաստան	67	3.90	50	4.83	94	2.06
Սլովակիա	67	3.90	50	4.83	94	2.06
Չեխիա	67	3.90	50	4.83	94	2.06
Տաջիկստան	100	3.72	92	4.47	89	2.23
Ղազախստան	120	3.19	119	3.48	76	2.60
Ռուսաստան	129	2.94	125	3.19	82	2.45

Մաքսային վարչարարության ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2012թ. (աշխարհի 132 երկրների շարքում)

Աղյուսակ 6.

Ե ր կ ր ն ե ր	**Մաքսային վարչարարության ենթաինդեքս**		այդ թվում					
			Մաքսային վարչարարության արդյունավետությունը		**Ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետությունը**		**Մաքսային վարչարարության հրապարակայնությունը**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	16	5.61	11	5.70	8	5.94	23	5.18
Սլովենիա	29	5.10	19	5.45	42	5.09	34	4.78
Վրաստան	33	4.85	27	5.13	53	4.94	39	4.49
Հունգարիա	35	4.82	15	5.59	58	4.82	45	4.05
Լեհաստան	38	4.73	48	4.46	36	5.20	38	4.53
Լիտվա	40	4.67	44	4.52	34	5.24	41	4.23
Չեխիա	41	4.65	21	5.28	52	4.94	55	3.72
Լատվիա	43	4.59	49	4.46	23	5.49	52	3.82
Սլովակիա	49	4.38	32	4.94	80	4.38	53	3.81
Մոնտենեգրո	52	4.36	67	4.13	45	5.05	48	3.90
Ալբանիա	54	4.32	38	4.65	63	4.76	61	3.55
Ռումինիա	57	4.24	53	4.43	65	4.71	60	3.56
Խորվաթիա	61	4.11	57	4.38	74	4.45	63	3.50
Սերբիա	67	3.98	59	4.31	72	4.54	75	3.10
Բուլղարիա	74	3.88	72	4.07	73	4.47	73	4.47
Մակեդոնիա	80	3.77	111	2.97	69	4.65	58	3.68
Հայաստան	**85**	**3.54**	**74**	**3.96**	**96**	**3.97**	**100**	**2.70**
Բոսնիա-Հերցոգ.	97	3.41	122	2.82	83	4.30	72	3.12
Մոլդովա	101	3.32	95	3.49	102	3.65	95	2.82
Ադրբեջան	107	3.11	46	4.50	123	2.25	108	2.58
Ռուսաստան	111	3.03	89	3.66	114	2.90	113	2.53
Ուկրաինա	116	2.85	126	2.78	107	3.37	123	2.40
Ղրղզստան	125	2.64	82	3.80	127	1.85	127	2.26
Ղազախստան	127	2.62	107	3.11	130	1.64	76	3.09
Տաջիկստան	128	2.46	114	2.96	131	1.56	93	2.85

Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2012թ. (աշխարհի 132 երկրների շարքում)

Աղյուսակ 7.

Ե ր կ ր ն ե ր	**Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթաինդեքս**		այդ թվում					
			Տրանսպորտային ենթակառուցվածքի մատչելիությունը և որակը		**Տրանսպորտային ծառայությունների մատչելիությունը և որակը**		**Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունը և օգտագործումը**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Սլովենիա	30	4.85	30	5.09	29	4.37	28	5.09
Էստոնիա	31	4.72	50	4.63	54	3.85	15	5.69
Չեխիա	32	4.71	29	5.12	46	4.01	33	5
Խորվաթիա	33	4.71	35	4.95	42	4.11	30	5.05
Սլովակիա	37	4.55	51	4.61	32	4.32	39	4.71
Լիտվա	38	4.54	62	4.34	58	3.84	24	5.44
Հունգարիա	42	4.37	86	3.72	27	4.45	34	4.96
Լատվիա	44	4.35	47	4.69	76	3.53	36	4.81
Ղազախստան	45	4.31	48	4.67	57	3.84	47	4.43
Լեհաստան	49	4.24	82	3.8	33	4.31	43	4.6
Ռուսաստան	51	4.23	56	4.46	72	3.57	42	4.64
Բուլղարիա	52	4.2	66	4.24	55	3.84	45	4.51
Մոնտենեգրո	54	4.06	54	4.48	99	3.22	46	4.49
Հայաստան	63	3.92	59	4.36	62	3.77	67	3.63
Ուկրաինա	64	3.91	61	4.34	83	3.42	61	3.98
Վրաստան	66	3.88	49	4.63	85	3.39	69	3.62
Ռումինիա	68	3.86	98	3.41	47	3.98	54	4.18
Ադրբեջան	69	3.84	73	4.08	53	3.86	76	3.57
Ալբանիա	71	3.81	94	3.62	64	3.75	58	4.06
Սերբիա	75	3.73	118	3.05	43	4.05	57	4.1
Մակեդոնիա	76	3.73	77	3.9	98	3.26	59	4.04
Բոսնիա-Հերցոգ	80	3.69	108	3.21	35	4.27	74	3.59
Մոլդովա	83	3.59	88	3.68	79	3.44	66	3.65
Տաջիկստան	92	3.4	68	4.16	90	3.35	101	2.68
Ղրղզստան	98	3.31	81	3.81	110	2.99	91	3.12

Գործարար միջավայրի ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2012թ. (աշխարհի 132 երկրների շարքում)

Աղյուսակ 8.

Ե ր կ ր ն ե ր	**Գործարար միջավայրի ենթաինդեքս**		այդ թվում			
			Կանոնակարգումների միջավայրը		**Ֆիզիկական անվտանգությունը**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	27	5.18	30	4.56	19	5.79
Մոնտենեգրո	32	5.02	41	4.24	21	5.79
Սլովենիա	39	4.73	65	3.72	23	5.75
Լեհաստան	46	4.61	51	3.94	43	5.29
Վրաստան	50	4.49	64	3.72	45	5.26
Լիտվա	51	4.45	74	3.62	42	5.29
Ալբանիա	52	4.45	72	3.62	44	5.28
Հունգարիա	53	4.45	63	3.73	48	5.17
Չեխիա	54	4.43	66	3.7	51	5.16
Լատվիա	58	4.41	62	3.73	52	5.09
Ադրբեջան	59	4.37	60	3.75	59	4.99
Խորվաթիա	60	4.36	102	3.36	37	5.37
Հայաստան	61	4.36	85	3.54	49	5.17
Սլովակիա	63	4.32	76	3.6	54	5.04
Տաջիկստան	72	4.22	78	3.6	70	4.83
Մակեդոնիա	73	4.21	81	3.57	68	4.86
Բոսնիա-Հերցոգ	78	4.11	110	3.2	55	5.02
Ռումինիա	81	4.09	100	3.4	72	4.77
Մոլդովա	87	3.93	112	3.15	74	4.72
Ղազախստան	89	3.9	99	3.41	88	4.38
Սերբիա	91	3.85	116	3.08	80	4.63
Բուլղարիա	98	3.74	101	3.38	99	4.1
Ուկրաինա	103	3.66	125	2.86	86	4.46
Ռուսաստան	113	3.45	117	3.07	107	3.84
Ղրղզստան	116	3.45	127	2.72	95	4.18